

**Կանանց հզորացումը և համագործակցությունը
Հայաստանում՝ Սյունիքի մարզի օրինակով**

**Ձեկույցը պատրաստվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համար
Բիրգիտա Վիսթրենդի կողմից՝ Արմինե Մխիթարյանի աջակցությամբ**

Երևան, 2007թ.

Ներածություն

Սույն զեկույցը պատրաստվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համար՝ գենդերային հարցերով փորձագետ և Շվեդիայի խորհրդարանի նախկին անդամ Բիրգիտա Վիսթերենդի կողմից՝ հայ փորձագետ Արմինե Մխիթարյանի աջակցությամբ: Հանձնարարված է եղել ուսումնասիրել գենդերային իրավիճակը Հայաստանում, մասնավորապես Սյունիքի մարզում, վերլուծել կանանց տնտեսական և քաղաքական մասնակցության մակարդակն ու խոչընդոտները և առաջարկներ ներկայացնել նշված մարզի քաղաքական և տնտեսական կյանքում կանանց ներգրավվածությունն ամրապնդելու ուղղությամբ:

ԵԱՀԿ գրասենյակը Սյունիքի մարզում ներկայացված է Կապանում ԵԱՀԿ տնտեսական-բնապահական ծրագրի ներկայացուցչության միջոցով, որը հիմնադրվել է 2006թ. հունիսին: Ծրագրի նպատակն է խթանել մարզի տնտեսական զարգացումն ու բնապահականությունը: Ի թիվս ծավալած այլ գործողությունների, ներկայացուցչությունը, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարացման ծրագրի հետ համատեղ, արդեն իսկ աջակցել է բիզնեսում տեղաբնակ կանանց ներգրավելուն նպաստող որոշ ծրագրերի իրականացմանը:

Գենդերային խնդիրները ԵԱՀԿ բոլոր գործողությունների կարևոր մասն են կազմում: Գենդերային հավասարության խթանման ԵԱՀԿ-ի 2004թ. գործողությունների ծրագիրը ի թիվս այլոց սահմանում է հետևյալ առաջնությունը՝ խթանել քաղաքական, հասարակական և տնտեսական բնագավառներում կանանց մասնակցության հավասար հնարավորությունները: Ակնկալում ենք, որ այս զեկույցը կնպաստի Հայաստանում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումների ծավալմանը, հիմք կհանդիսանա բոլոր շահագրգիռ կողմերի համար՝ ձեռնարկելու այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն գենդերային անհավասարության վերացմանը ու կխթանեն քաղաքական և տնտեսական կյանքում կանանց դերի բարձրացումը՝ թե՛ տեղական, և թե՛ ազգային մակարդակով:

Ամփոփ նկարագիր և առաջարկություններ

Սույն զեկույցն ու դրանում ընդգրկված առաջարկությունները հիմնված են Հայաստանին առնչվող թե՛ ազգային և թե՛ միջազգային գրավոր փաստաթղթերի վրա, (դրանցից օգտվելու դեպքում տեքստի մեջ հղումներ են կատարվել): Տեղեկատվության մեկ այլ կարևոր աղբյուր են հանդիսացել ԵԱՀԿ Երևանի գրասենյակի անձնակազմի հետ քննարկումները, Երևանում և Սյունիքի մարզում անցկացված հետազոտությունը՝ ներառյալ 15 ֆոկլուս խմբերը **գործարար, քաղաքականությամբ զբաղվող և գործազուրկ կանանց** հետ: Ֆոկլուս խմբերի անցկացումն ու վերլուծությունը իրականացրել է ազգային փորձագետ Արմինե Մխիթարյանը: Անձամբ Երևանում ու Սյունիքում 40 հարցազրույց են անցկացրել կին խորհրդարանականների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց հետ: Հետազոտությունը անցկացվել է 2007թ.-ի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին:

ԵԱՀԿ հետագա ծրագրերի հետ կապված առաջարկում են սատարել տնտեսության և ժողովրդավարության զարգացումը Հայաստանում՝ շեշտը դնելով կանանց հզորացման և համագործակցության վրա: Մասնավորապես, կանանց ընդգրկել քաղաքական և տնտեսական գործընթացներում և ավելացնել կանանց քվաքանակը որոշումների ընդունման մակարդակում:

Քանի որ Սյունիքում կանանց դրությունն արտացոլում է Հայաստանի կանանց հանընդհանուր դրությունը, զեկույցը սկսվում է ամբողջ երկրի մասշտաբով կանանց հավասար հնարավորությունների հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրությամբ: Ընդսմին, հեշտ չէ վերլուծել կանանց դրությունը Հայաստանում, երբ հասարակության մի ստվար հատված գենդերային հարցերի նկատմամբ անտարբեր է: Թեկուզ և առկա է Հայաստանի կանանց և տղամարդկանց մասին վիճակագրական ձեռնարկ՝ հիմնված գենդերային հարցերի վերաբերյալ տեղեկատվության վրա, սակայն կառավարության և միջազգային կազմակերպությունների վիճակագրական շատ զեկույցներում բացակայում են գենդերային տվյալները: Նույնիսկ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում չկա գենդերային հարցերի վերաբերյալ վիճակագրություն: Այդ հանգամանքն ակնհայտ էր նաև Սյունիքի մարզում, որտեղ գրեթե անհնար էր կանանց և տղամարդկանց մասին տվյալներ ձեռք բերել: Միակ ոլորտը, որտեղ կարելի է գենդերային հարցերի վերաբերյալ վիճակագրություն ձեռք բերել՝ քաղաքական ոլորտն է:

Վիճակագրության հասանելիության դեպքում կարելի է չափել և ճշգրտել փոփոխությունները: Ուստի իմ առաջին առաջարկությունն է ուսումնասիրություններ ու հետազոտություններ իրականացնելիս ընդլայնել գենդերային հարցերի վերաբերյալ վիճակագրությունը: Այս ոլորտում ԵԱՀԿ-ն առաջատար դեր կարող է կատարել և իր բոլոր գործողությունների համար ներկայացնել գենդերային հարցերի վերաբերյալ տվյալներ:

Հավասար հնարավորությունների հասնելու մի նախադրյալ է *2004-2010թթ. կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման վերաբերյալ ազգային գործողությունների պլանի* իրագործումը՝ ազգային ապարատով և ֆինանսական ռեսուրսներով: Արդեն մի քանի տարի է, ինչ սա միջազգային կազմակերպությունների և կանանց հասարակական

կազմակերպությունների պահանջն է: Այդուհանդերձ, կառավարությունը մինչ այժմ որևէ քայլ չի ձեռնարկել:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանանց և կանանց խմբերի ու ՅԿ-ների միջև համագործակցությունը հազվադեպ է: Սա առանցքային գործոն է և Հայաստանում կանանց դանդաղ առաջընթացն ու **կանանց շարժման բացակայությունը** բացատրող պատասխաններից մեկը: Հասարակությունը երբեք իրենց իրավունքները պնդող կանանց միավորված մարմնի ականատես չի եղել: Շատ երկրներում փոփոխության նախապայման է համարվում կանանց «կրիտիկական զանգվածը»: **ԵԱՀԿ-ն արդեն աջակցում է մի նախաձեռնության, որի իմաստն է "Կանայք և քաղաքականությունը" թեմայով Հայաստանի առաջատար թերթերում ամենամսյա ներդիր ունենալը:** Կոմպլեմենտար գործողություն կարող է լինել Երևանից և երկրի մյուս շրջաններից առաջատար կանանց հրավիրել ամենամսյա ժողովների՝ թերթի բովանդակությանը և կանանց այլ հիմնախնդիրներին նվիրված քննարկումներ անցկացնելու համար:

Նման ցանցային հանդիպումները կարող են հանգեցնել կանանց իրավունքների վերաբերյալ բնավեճերի և հակազդել հասարակական ու քաղաքական կյանքում գործող կանանց նկատմամբ կիրառվող երկակի ստանդարտներին:

Այս միջոցառումների կապակցությամբ պետք է տարբեր հեռուստաալիքներով նախաձեռնել ծրագրեր՝ գեներային և գեներային կարծրատիպերի մասին խմբային քննարկումները կամ/և պարբերական բնույթ կրող հաղորդումները խթանելու համար:

Հայաստանի կանանց համեմատությամբ՝ **Սյունիքում կանանց** ազդեցությունը տնտեսական ու քաղաքական կյանքի վրա ավելի ցածր է, քանի որ տեղի որոշում կայացնող մարմիններում նրանց ներկայացվածությունը ցածր է կամ ընդհանրապես բացակայում է: Հասարակության կենսական ոլորտները տնօրինվում են տղամարդկանց կողմից և կանանց փոխարեն նրանք են որոշումներ կայացնում:

Նույնիսկ եթե կանայք ընդգրկված չեն տղամարդկանց ոչ ֆորմալ ցանցերում (բիզնես և քաղաքականություն), ապա նրանք կախված են տղամարդկանց աջակցությունից և համաձայնությունից՝ կապված իրենց հետագա գործունեության հետ: Ընդհանուր իրավիճակը նրանց համար ճնշող է դառնում աշխատանքի կրկնակի կամ եռակի ծանրաբեռնվածությունից: Շատերն ընդունում են, որ տեղյակ չեն իրենց իրավունքների մասին և հիմնականում տեղեկություններն իրենց հասանելի չեն: Տնտեսական սուղ միջոցները սահմանափակում են նրանց գործողությունը բիզնեսում և քաղաքականության մեջ: Ոմանք երկար ժամանակ գործազուրկ են եղել և աշխատանք գտնելու հեռանկարներ չեն տեսնում: Կանանց գերակշիռ մասը ընտանիքից դուրս կապեր կամ ծանոթներ չունի և նրանք հազվադեպ են համագործակցում կամ չեն համագործակցում այլ կանանց հետ բիզնեսի կամ քաղաքականության հարցերում: Կանանց համար չկա հասարակական հանդիպումներ անցկացնելու հնարավորություն: Հետևաբար, միանգամայն բնական է, որ որոշ կանայք հոռետեսական վերաբերմունք են արտահայտել ապագայի մասին:

Կանանց հզորացնելու և հասարակության բոլոր մակարդակներում ընդգրկելու համար՝ առաջարկում են ստեղծել չորս ռեսուրս կենտրոններ Կապանում, Գորիսում, Սիսիանում և Մեղրիում:¹ Այդ կենտրոնները պետք է նպատակաուղղված լինեն կանանց հզորացմանը երկու բնագավառներում՝ տեղական իշխանություններում և բիզնեսում, և կանանց համար հանդիպման վայր հանդիսանան՝ տեղական կարիքներին համահունչ միջոցառումներ իրականացնելու համար:

Հայ կանայք անտեսանելի են հասարակական կյանքում

Սյունիքի մարզում կանանց կարիքներն ավելի լավ պատկերացնելու համար նախընտրել են սկսել հայ կանանց ընդհանուր վիճակի ուսումնասիրությամբ, այնուհետև անցնել Սյունիքի կանանց բնորոշ իրավիճակին:

Հայ հասարակությունն ու տնտեսությունը վերջին տասը տարիների ընթացքում զգալի զարգացում են ապրել: Հայաստանն այսօր 46-րդ տեղն է գրավում ըստ մեկ շնչի հաշվով բաժին հասնող եկամտի (2,100 ԱՄՆ դոլար 1999 թվականի 485 ԱՄՆ դոլարի համեմատությամբ):² Միևնույն ժամանակ, այլ աղբյուրները վկայում են աճող կոռուպցիայի, ընդարձակ ստվերային տնտեսության և լրացուցիչ սոցիալական բևեռացման մասին. մի իրադրություն, որը բացասական ազդեցություն է թողնում բազմաթիվ կանանց իրավիճակի վրա: Համաձայն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի զեկույցի, Հայաստանն աշխարհում 80-րդ տեղն է գրավում Մարդկային զարգացման համաթվով:³ Սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետևանքներից մեկը ձեռնարկությունների փակվելն էր, որը բացասաբար անդրադարձավ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց վրա: Եթե 1991թ. անկախությունից հետո ավելի քան 600.000 տղամարդ հեռացավ հայրենիքից աշխատանք գտնելու նպատակով, ապա կանայք մնացին Հայաստանում՝ հայտնվելով միանգամայն նոր իրավիճակում՝ որպես ընտանիքի կերակրողներ առանց վարձու աշխատանք ունենալու: Հետևանքն այսօր ակնհայտ է՝ կանանց գործազրկության մակարդակը, տղամարդկանց գործազրկության մակարդակի հետ համեմատած, բավականին բարձր է:⁴

Այդուհանդերձ, Հայաստանի համար կանայք հզոր ուժ են: Այցելության ընթացքում շատ ակտիվ և առաջնորդի հմտություններ ունեցող կանանց են հանդիպել, մի երևույթ, որը հասարակության կողմից պետք է ավելի մեծ գնահատականի արժանանա, քան արվում է:

Սակայն հեշտ չէ վերլուծել կամ նույնիսկ նկարագրել կանանց իրավիճակը Հայաստանում, երբ հասարակության մի ստվար հատված չի նկատում և անտարբեր է գենդերային հարցերի նկատմամբ: Թեպետ միջազգային

¹ Ռեսուրս կենտրոնները հաջողություն են ունեցել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Շվեդիան, Ուկրաինան և Ռուսաստանը, բայց դրանք պետք է հարմարեցվեն կանանց և հասարակության տարբեր կարիքներին:

² *Doing Business 2008, Armenia*, World Bank Group, Washington D.C., USA 2007.

³ *Այլընտրանքային զեկույց*, Համալսարանական կրթություն ունեցող կանանց հայկական ասոցիացիա, Երևան 2007:

⁴ Նույն իրավիճակը ստեղծվեց նախկին ԽՍՀՄ շատ պետություններում: Սոցիալիզմի վախճանն ու անցումը ժողովրդավարության ու շուկայական տնտեսության կաթվածահար արեցին հասարակական դիրք զբաղեցնող շատ կանանց շարքեր և լճացրեցին քաղաքացիական հասարակության գործունեության շրջանակում նրանց ներգրավվածությունը:

աջակցությամբ կառավարությունը Հայաստանի կանանց և տղամարդկանց մասին վիճակագրական ձեռնարկ է հրատարակել, սակայն կառավարության և միջազգային կազմակերպությունների վիճակագրական շատ զեկույցներ գեներային տեղեկություններ չեն պարունակում այն մասին, թե ինչ իրողության առջև են կանայք հայտնվել:⁵ Նույնիսկ մարդու իրավունքների պաշտպանի համար հասանելի չէ գեներային հարցերի վերաբերյալ վիճակագրությունը: Միաժամանակ, տարբեր հասարակական կազմակերպություններ ներկայացնող կանայք զրույցների ընթացքում դեմ են արտահայտվել պետական վիճակագրական ցուցանիշներին՝ դրանք համարելով իրականությանը չհամապատասխանող: Պետական գերատեսչություններն էլ հաճախ քննադատել են ՀԿ-ների ներկայացրած տվյալները: Թե ինչու կառավարությունը չի կիրառում ՄԱԿ-ի կողմից օգտագործվող միավորված համակարգը և գեներային անհավասարության չափանիշը երբևէ չի պարզաբանվել:⁶ Այս հանգամանքը մասնավորապես ակնառու է Սյունիքի մարզում, որտեղ բավական դժվար էր կանանց իրավիճակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերել:

Հետևաբար, կանանց ձեռքբերումները, փորձն ու պայմանները տեսանելի չեն և նույնիսկ հասանելի չեն քննարկումների կամ փոփոխություններ կատարելու համար, քանի որ չկան փաստեր կամ ցուցանիշներ, որոնք կարելի է վկայակոչել: Միակ ռեալ, հուսալի գեներային ցուցանիշները թերևս ընտրությունների արդյունքներն են, որով էլ բացատրվում է այն հանգամանքը, թե ինչու են այդ ցուցանիշները վիճարկվում ու մեծ ուշադրություն գրավում:

Գեներային հավասարությունն ընդլայնելու մեկ այլ խոչընդոտ և խնդրահարույց հանգամանք է այն փաստը, որ Հայաստանի կառավարությունը *2004-2010թթ. կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման վերաբերյալ գործողությունների ազգային ծրագիրն* ընդունել է՝ առանց այդ ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ ազգային մեխանիզմ ու ֆինանսական ռեսուրսներ ստեղծելու: Տարիներ առաջ սա արժարժվել է CEDAW (Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա) կոմիտեների և շատ ՀԿ-ների վերլուծություններում, բայց կառավարությունը մինչև այժմ որևէ քայլ չի ձեռնարկել:

Մարդու և կանանց իրավունքների վերաբերյալ իրավական փաստաթղթերի մասին համընդհանուր իրազեկությունը շատ ցածր է և հազվադեպ է ուշադրության արժանանում ՁԼՄ-ներում:⁷ Հայ հասարակության մեջ տպագիր մամուլի թույլ դերը (օրական առավելագույնը 6000 տպաքանակ՝ յուրաքանչյուր թերթի համար երևանում) հանդիսանում է ոչ բավարար իրազեկության և տեղեկությունների պատճառներից մեկը: Շատ թերթեր միայն տեղական ծածկույթ ունեն, ուստի ամենակարևոր ու ազդեցիկ աղբյուրը հեռուստատեսությունն է: Տեղեկությունների տրամադրումը հաճախ օգտագործվում է որպես ուժային ռեսուրս, որը հասանելի չէ ամենքին: Հետևաբար, առանց չափազանցության, կարելի է համարել, որ գեներային հարցերի հասարակական քննարկում գոյություն չունի՝ բացառությամբ կանանց որոշ խմբերի, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող քննարկումները:

⁵ *Հայաստանի կանայք և տղամարդիկ*, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, 2006:

⁶ *Human Development Report 2006. Beyond Scarcity: Power, poverty and the global water crises*. N.Y., UNDP, 2006, p.364.

⁷ CEDAW A/57/38/part III(2002), para 69.

խորհրդարանի վերջին ընտրություններում կանայք ձեռք բերեցին 12 տեղ (9,2 %): Սա ցույց է տալիս, որ նոր ներմուծված 15% քվոտան նպաստել է կուսակցական ցուցակներում կանանց թվաքանակի աճին, որը, սակայն, բավական չի եղել խորհրդարանում կանանց 15% ներկայացվածություն ապահովելու համար:⁸ Հետևաբար, հասարակական և քաղաքական կյանքում գործադիր կամ որոշում կայացնող պաշտոնները տղամարդկանց կողմից զբաղեցնելու ավանդույթները գրեթե անփոփոխ են մնում: **Որոշում կայացնող մարմիններում կանանց բացակայությունը** պետք է ընդունել որպես **ժողովրդավարության պակասորդ և հասարակության բոլոր մակարդակներում մարդկային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման ցուցիչ**: Բայց ոչ բոլորն են համամիտ այս մոտեցման հետ:

Վերջին ընտրությունների արդյունքներով Հայաստանը շատ հեռու է համաշխարհային միջին ցուցանիշից՝ կանանց ներկայացվածության առումով, իսկ հարավ-կովկասյան հանրապետությունների շարքում նույնիսկ վերջին տեղն է գրավում: Վերջին ընտրությունների մասին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցում հիշատակված են կանանց առնչվող պայմանները՝ «Հայաստանի իրավական դաշտը սահմանում է հավասարություն կանանց և տղամարդկանց միջև՝ ներառյալ սահմանադրության մեջ խտրականության դեմ դրույթը: [...] Այդուհանդերձ, իրագործման և մոնիթորինգի համար անհրաժեշտ մեխանիզմ լիովին առկա չէ: [...] Գեներային դերերին ավանդական մոտեցումը գերակշռող է Հայաստանում, և քաղաքականության մեջ մտնելու փորձ կատարելիս կանայք լուրջ աջակցության կարիք ունեն»:⁹

Երբ իշխանությունը ասոցիացվում է տղամարդկանց հետ, բնական է, որ կանայք կորցնում են վստահությունը ինչպես իրենց, այնպես էլ ուրիշ կանանց հանդեպ՝ իրենց անգործ համարելով:¹⁰ Քաղաքականությամբ զբաղվող կանայք նույնիսկ չեն դիտում իրենց որպես կին կամ ասոցիացնում կանանց դրության հետ: Ըստ երկու սեռերի կողմից ընդունվող կարծրատիպերի քաղաքականության մեջ կանայք օտար են, և որ «հայ տղամարդիկ իրենց մտածելակերպով նույնիսկ չեն կարող պատկերացնել, որ իրենց կարող են ղեկավարել կանայք»: Նման մեկնաբանությունները որոշակի հիմնավորում են տալիս այն փաստին, որ վերջին ընտրություններում աշխատանքի 80%-ը կատարվել է կանանց կողմից, սակայն չնչին կամ առանց փոխհատուցման: Բայց նույնիսկ քաղաքականության մեջ ներգրավված կանայք իրազեկ չեն իրենց վիճակին և փորձում են վերաձևակերպել տղամարդկանց պահվածքը:¹¹ Մեկ այլ՝ հաճախ հանդիպող (թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց պարագայում) տեսակետ է հետևյալը. կանայք ավելի շատ պետք է կրթվեն ու վերապատրաստվեն, եթե ուզում են հաջողության հասնել քաղաքականության մեջ: Բայց Հայաստանում կանայք շատ լավ կրթված են, ու դա ըստ էության միակ ոլորտն է, որտեղ թերևս հավասարություն կա: Մյուս կողմից, քաղաքականության մեջ մուտք գործող տղամարդկանց կրթության մասին ոչ ոք չի

⁸ Վերլուծական տեսություն — Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին, Երևան, 2007թ.

⁹ OSCE/ODHIR *Election Observation Mission Final Report*, p. 21.

¹⁰ *Gender Equality. Striving for Justice in an Unequal World*, United Nations Research Institute For Social Development, 2005, pp. 9-18.

¹¹ Աժ պատգամավոր Ռուզաննա Առաքելյանը հարցազրույցներից մեկի ժամանակ ասել է. «Խտրականություն չկա, բայց կա մի ուրիշ բան. կանանց ասածները լրջությամբ չեն ընդունվում»: *Կանանց քաղաքական մասնակցությունը 2007թ. ՀՀ խորհրդարանի ընտրություններին, Վերլուծական քննություն, AAWUE, Երևան 2007, էջ 44*:

խոսում:¹² Իրականում ամեն տեսակի կարծրատիպեր ու խտրականությամբ համակված պնդումներ են տարածված հասարակության և կուսակցությունների ներսում. «Կանայք չպետք է քաղաքականությամբ զբաղվեն, իսկ զբաղվելիս՝ չպետք է գործեն որպես կին: Ժողովրդավարությանն անհրաժեշտ են կանայք, սակայն տղամարդը իր պաշտոնը երբեք չի զիջի կնոջը: Կանայք չեն կամենում մուտք գործել քաղաքականություն, քանզի քաղաքական համակարգը խիստ կոռումպացված ու քրեականացված է»: Այս արտահայտությունները վեր են հանում քաղաքականության մեջ կանանց դիրքի հանդեպ դիրքորոշումներում տեղ գտած անորոշությունն ու երկակի ստանդարտները:

Փաստորեն կանայք աննկատ են մնում կառավարությունում, խորհրդարանում և տեղական ինքնակառավարման մարմիններում (գյուղապետերի միայն 2%-ն են կանայք, քաղաքապետերի՝ 0%-ը), գերատեսչություններում և քաղաքական կուսակցություններում: Նույնիսկ ՁԼՄ-ներում կանայք տեսանելի չեն: ՁԼՄ-ներում կանանց և կանանց հիմնախնդիրներին առնչվող նյութի բացակայությունը վերաբերում է ոչ միայն ընտրություններին, այլև առօրյա կյանքին: Հարավային Կովկասում կին լրագրողների կատարած վերջին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ կանանց ցուցանիշը ցածր է տարածաշրջանի այլ երկրների հետ համեմատած:¹³ Ըստ հեղինակների՝ հայ կին լրագրողները ինքնաքննադատական մոտեցում ունեն: Վերլուծելով իրենց ձեռք բերած արդյունքները՝ նրանք մատնանշում են, որ ՁԼՄ-ները մեծ մասամբ պասիվ են եղել: **Գենդերային անհավասարությունը վերհանելու փոխարեն ՁԼՄ-ները ստեղծում են գենդերային կարծրատիպեր կամ անտեսում կանանց, այսինքն՝ կանանցից հարցազրույցներ չեն վերցնում կամ նրանց չեն լուսանկարում:** Կին լրագրողների հետ զրույցների ընթացքում նրանք պարզել են, որ թեկուզ կանայք մեծամասնությունը են կազմում լրագրողների շրջանում, սակայն գլխավոր խմբագիրները տղամարդիկ են, որոնք հեշտությամբ չեն ընդունում կամ հրատարակում գենդերային հարցերի, կանանց իրավունքների և հավասարության մասին նյութերը:

Հայ կինը՝ նահապետական կառույցի ծուղակում

Երկակի ստանդարտներով մեխանիզմները հասարակական կյանքում, որտեղ ակտիվ կանայք տեսանելի չեն կամ չնչին տեղ են զբաղեցնում, միջամտում են նաև հայ կանանց անձնական կյանքին: Հետևյալ հանգամանքները թեև քաջ հայտնի են, բայց կուզենայի շեշտել երկու հիմնախնդիր՝ սեփականության իրավունքներն ու կանանց դեմ ընտանեկան բռնությունը, որոնք հաճախ ներկայացվել են որպես խտրականության և նահապետական արժեքների հզորության օրինակներ:

Սահմանադրության մեջ սեփականության իրավունքները կանանց և տղամարդկանց համար հավասար են, բայց կանայք շարունակաբար պնդում են, որ իրականում հայրը, եղբայրը, այնուհետև ամուսինն են տնօրինում սեփականությանը, որն օրենքով կնոջն է պատկանում: Սեփականություն չունենալու դեպքում հնարավոր չէ վարկ վերցնել կամ սեփական բիզնես սկսել՝

¹² Գենդերային դրությունը Հայաստանում, *AAWUE*, Երևան 2005, էջ 45: Ձեկույցը հավաստում է նաև, որ թեկուզ կանայք Կրթության միսիարարության աշխատակազմի 60%-ն են կազմում, սակայն կրթական բաժնի որոշում կայացնող մարմիններում նրանք պաշտոններ չեն զբաղեցնում:

¹³ *Women's Opinion in Mass Media. Monitoring of national newspapers in countries of South Caucasus and Central Asia*, GenderMediaCaucasus Journalists' Association, ODIHR OSCE, 2005

առանց հոր կամ ամուսնու թույլտվության: Երբ այս պարագան առաջ էր քաշվում կանանց հետ գրույցների ընթացքում, նրանք հաճախ մատնանշում էին «հայկական մտածելակերպը», մի բան, որը չեն կարող փոխել, այլ ստիպված են միայն ենթարկվել ընտանեկան և ամուսնական ավանդույթներին: Սյունիքի կանանց շրջանում անցկացված ֆոկլուս խմբերի արդյունքում ակնհայտ դարձավ, որ կանայք չգիտեն իրենց իրավունքները և դրանցից օգտվելու եղանակները: Նրանք լոկ ընկճված էին, ինչպես իրենք էին ասում՝ կյանքի իրողություններից:

Ընտանեկան բռնությանն առնչվող վերջին ուսումնասիրությունը ցույց է տալիս «սեփականության մասին գոյություն չունեցող իրավունքների» կարևոր դերակատարությունը կանանց կյանքում:¹⁴ Ձեկույցը վկայում է ոչ միայն ֆիզիկական, այլև՝ հոգեկան ոտնձգությունների բարձր ցուցանիշի մասին. **տասը կանանցից վեցը պնդում է, որ «լավ կինը միշտ պետք է հնազանդ լինի ամուսնուն, նույնիսկ եթե համաձայն չլինի նրա հետ»:** Այս մոտեցումները նաև առնչվում են այն հանգամանքին, թե ո՞վ է որոշում ինչպես վարվել կնոջ վաստակած գումարի հետ: Ամուսնուն չհնազադնվելն այդ դեպքում, ըստ կանանց, կարող է արդարացնել ֆիզիկական ոտնձգությունը կամ ուժի գործադրումը: Հատկապես գյուղաբնակ կանայք ու Երևանից դուրս ապրողներն էին առավել հակված ընդունելու ոտնձգություն կատարելու՝ տղամարդու իրավունքը: Բայց նույնիսկ ոտնձգությունն արդարացնող կանանց մեջ առկա են երկակի ստանդարտներ, քանի որ ուսումնասիրության մեջ ընդգրկված բոլոր կանայք դեմ են արտահայտվել իրենց ամուսինների կողմից բռնություններին ու դիմել են կառավարությանը՝ ընտանեկան բռնության մասին օրենք ստեղծելու և աջակցություն ցուցաբերելու խնդրանքով: Այս, ինչպես նաև կյանքի շատ այլ հանգամանքներում կանայք չեն կարող ապավինել ընտանիքին:

Այնուամենայնիվ, որոշ կանայք այն կարծիքն են արտահայտել, թե ավանդական ընտանեկան կառույցը փոփոխվում է, հատկապես Երևանում, և, որ երիտասարդ կանայք այսօր ավելի ազատ կարող են ընտրություն կատարել: Սակայն երիտասարդ կանայք անգամ մատնանշել են, որ կանանց և տղամարդկանց միջև հարաբերություններում երկակի ստանդարտները դեռ առկա են, այսինքն՝ տղամարդիկ սեռական կապ կարող են ունենալ ամուսնությունից առաջ և հետո, իսկ կանանց դեպքում նման պահվածքն արգելվում է և անհնարին է համարվում:¹⁵

Հետևաբար, այսօր հայ կանայք հաճախ են առնչվում մի հասարակության հետ, որտեղ օրենքով հավասար իրավունքներ ունեն, սակայն իրական կյանքի պայմանները ցույց են տալիս, որ նրանք չեն կարող օգտվել այդ իրավունքներից՝ ոչ հասարակական, ոչ էլ անձնական կյանքում: Այս հանգամանքն ավելի հաճախ հանդիպում է Երևանից դուրս, օրինակ՝ Սյունիքում: Սա ոչ միայն զգալի հուսահատություն ու անապահովություն է ստեղծում, այլ նաև նվազեցնում է կանանց ինքնավստահությունն ու հաստատականությունը՝ նրանց դարձնելով պասիվ և կանխելով հասարակության մեջ պարտականություններ ստանձնելու ցանկությունը: Հասարակական կյանքում ակտիվություն դրսևորելու դեպքում,

¹⁴ Համազգային ուսումնասիրության արդյունքների մասին զեկույց. Հայաստանում կանանց դեմ ընտանեկան բռնություններն ու ոտնձգությունները: Կանանց իրավունքների կենտրոն, Երևան, Հայաստան, մայիս 2007:

¹⁵ Սեռական կրթության պակասն ու անհրաժեշտությունը հաճախ է առաջ քաշվել, բայց խոցելի խնդիր է համարվել, չնայած որ այն բարդություններ ու դժվարություններ է առաջացնում, հատկապես գյուղական բնակավայրերի կանանց համար: Այս անտարբերության հետևանքներից մեկն էլ արհեստական վիժեցումները որպես հակաբեղմնավորիչ միջոց օգտագործելու տենդենցն է:

ինչպես վերջին ընտրությունների ժամանակ էր, կանայք փոխհատուցում չեն ստանում իրենց մատուցած ծառայության դիմաց: Հաստատական կնոջ տնտեսական գործողությունների փոխհատուցումը կարող են լինել անձնական կյանքում կրած ոտնձգությունն ու բռնությունը:

ՀԿ-ները քայլեր են ձեռնարկում

Հայ կանանց դրությունը դժվար է պատկերացնել, քանի որ մոտեցումներն անորոշ են, և որոշ փոփոխություններ են տեղի ունեցել: Բայց ի վերջո ավելին է պետք՝ գենդերային ուղղորդման և գենդերային հավասարության հասնելու համար: **Դրանց ուղղված առաջին քայլը արժեքների և մոտեցումների վերաբերյալ բաց քննարկումն է հասարակական ու անձնական կյանքի գենդերային հարցերին առնչվող բնագավառներում:** Ուորտի կարևոր օղակներից մեկը կարող են լինել և եղել են ՀԿ-ները, որտեղ շատ կանայք քայլեր են ձեռնարկել՝ ոգեշնչվելով 1995թ. պեկինյան խորհրդաժողովից: ՀԿ-ները ակտիվ դեր են խաղում հասարակության բոլոր ոլորտներում: Նշենք մի քանիսը: «Համալսարանական կրթությամբ կանանց հայկական ասոցիացիայի» կողմից իրականացված գենդերային կրթությունը և գենդերային ուսումնասիրությունը կարևորում է կրթության դերը հավասարության հասնելու համար: Գյուղաբնակ կանանց հզորացնելու ուղղությամբ «Ժողովրդավարությունն այսօր» ՀԿ-ն իրականացրել է մի շարք գործողություններ: «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ն էլ, ի թիվս այլ աշխատանքների, Հայաստանում ընտանեկան բռնությունների և ոտնձգությունների վերաբերյալ ուսումնասիրություն է անցկացրել:

Տարբեր ՀԿ-ների զեկույցներ ուսումնասիրելիս և ներկայացուցիչների հետ հանդիպելից՝ չես կարող չտպավորվել նրանց աշխատանքից ու ձեռքբերումներից: Բայց որոշ կարևոր կետեր պետք է քննարկել: Առաջինը վերաբերում է ՀԿ-ների կառուցվածքին: Անձնակազմի չափը հաճախ անորոշ է, այսինքն՝ ՀԿ-ն կարող է կազմված լինել 3-4 անդամից, որտեղ տիրում է այն ընդհանուր կարծիքը, թե «ավելի շատ մարդիկ կարող են աշխատանք ունենալ, եթե ծրագրային դրամաշնորհներ լինեն»: Մի քաղաքում հանդիպեցինք մեկին, որի ներկայացրած ասոցիացիայի միակ անդամն ինքն էր: Մեկ այլ խնդիր է, թե ով է ՀԿ-ին լիազորություն կամ իրավունք տալիս գործելու հասարակության բոլոր շերտերում:

Միջոցառումների և ծրագրերի համար միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներից մեծ կախվածությունը կամավոր աշխատանքն ավելի հազվադեպ է դարձնում: Որոշ դեպքերում հասկանում ես, որ ՀԿ-ի հիմնադրումն առավելապես պատրվակ է եղել դրամաշնորհներ շահելու համար: Սա հանգեցրել է մի իրադրության, որում առկա է մրցակցություն ոչ թե համագործակցության և արդյունքների, այլ դրամաշնորհների համար: Կանանց ՀԿ-ների կատարած որոշ ուսումնասիրություններ չեն տարածվում նույնիսկ կազմակերպությունից դուրս գտնվող կանանց շրջանում:

Քանի որ շատ ՀԿ-ներ փոքր են, արդյունքը սահմանափակ է: Այս իրադրությունը կարելի է կարգավորել համագործակցության և ընդհանուր նպատակների միջոցով: Եթե ծրագիրը գրեթե ավարտված էր համարվում, բայց ֆինանսական օժանդակությունը դադարեցվում էր, ծրագիրը հնարավոր չէր լինում ավարտին հասնել: Մյուս կողմից, որոշ ծրագրեր հաջողություն են ունեցել, ինչպես օրինակ՝ OXFAM-ի կողմից հիմնված ծրագիրը՝ «Կապանի կին ֆերմերների

ասոցիացիան», որը Կապանի կանայք բավական հաջողակ են գնահատել: Արդյունքում՝ հողագործությունն այդ շրջանում շատ ավելի զարգացած է, քան Սյունիքի մյուս շրջաններում: **Ծրագիրն ունի որոշ առանցքային առանձնահատկություններ՝ երկարաժամկետ է, շոշափելի և հիմնված է կանանց միջև համագործակցության վրա:** Սյունիքի մարզում, ինչպես հանրապետության հեռավոր այլ մարզերում, սակավաթիվ ծրագրեր են գործում, քանի որ դրանց մեծ մասն իրականացվում է Երևանի մերձակայքում: Ուստի ավելի մեծ ծրագրեր իրականացնելու համար այստեղ կանայք նվազ կարողություն ու փորձառություն ունեն:

Մեկ կարևոր և վճռական գործոն, գուցե Հայաստանում կանանց հիմնախնդիրների դանդաղ առաջընթացի մեկ բացատրություն է կանանց ինքնուրույն շարժման բացակայությունը: Հասարակությունում երբեք չի հանդիպել իրենց իրավունքները պնդող կանանց միավորված մարմին: Շատ երկրներում փոփոխության նախապայման է համարվում կանանց «կրիտիկան զանգվածը»: Ուստի կանանց ՀԿ-ների խնդիրն է գիտակցել ընդհանուր օրակարգի և համագործակցության անհրաժեշտությունը:

Սյունիքի մարզ

ԵԱՀԿ ծրագրի ներկայացուցչությունը Սյունիքի մարզի Կապան քաղաքում ստեղծվել է 2006թ. հունիսին: Ծրագրի նպատակն է խթանել տեղի տնտեսական զարգացումն ու բնապահպանությունը: Ժողովրդավարացման ծրագրի հետ համատեղ Սյունիքի գրասենյակը արդեն որոշ աշխատանքներ է իրականացրել՝ խթանելով կանանց ներգրավումը բիզնեսում և երիտասարդների քաղաքացիական իրազեկվածությունը: Սյունիքի մարզը զգալիորեն տուժել է պատերազմից, որը բացասական ազդեցություն է ունեցել տնտեսության և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, հատկապես շատ կանանց պարագայում, որոնց ամուսինները կամ զոհվել են պատերազմում, կամ էլ արտագնա աշխատանքի են մեկնել Ռուսաստան կամ այլ երկրներ՝ ապրուստի միջոցներ հայթայթելու: Այդ իսկ պատճառով բնակչության 60 %-ն այժմ կանայք են կազմում, որոնցից շատերն ընտանիքի ղեկավարի դերում են:

Երևանից բավականաչափ հեռու լինելուց բացի Սյունիքը նաև Հայաստանի մասշտաբով բնակչության ամենացածր խտությունն ունի: Պատերազմից ի վեր տրանսպորտի և հաղորդակցության պակասն այստեղ լուրջ խնդիր է: 1990-ականների սկզբից չի գործում երկաթուղին, փակ է օդանավակայանը: Ինտերնետային և բջջային կապի ծառայությունների զարգացումը դանդաղ է, հեռուստառադիո հեռարձակումների ծավալը՝ սահմանափակ:¹⁶ Տրանսպորտային խնդիրներն առկա են ոչ միայն Սյունիք-Երևան հեռավորության պարագայում, այլև մարզի ներսում, որտեղ երկար տարածությունները, վատ ճանապարհներն ու հասարակական փոխադրամիջոցների անբավարարությունը բարդություններ են առաջացնում բիզնեսի ոլորտի գործողությունների, մարդկանց միջև հաղորդակցության համար, մասնավորապես կանանց դեպքում, որոնք չեն կարող

¹⁶ *Սյունիքի մարզի հեռանկարը: Սոցիալ-տնտեսական զարգացումը*, ԵԱՀԿ, Երևան 2004: ԵԱՀԿ զեկույցը նաև մատնանշում է, որ շատ դեպքերում տեղեկատվության պակասը երբեմն համայնքի ղեկավարների թույլ պրոֆեսիոնալ նախադրյալների հետևանք է, որոնք ընդունակ չեն ճշգրիտ ինֆորմացիա հայթայթել և օգտագործել, էջ 31:

ավտոմեքենա վարել: Գյուղաբնակ կանայք հաճախ են գանգատվել քաղաքային շուկաներ հասնելու դժվարություններից:

Այսօր միայն Սյունիքի մարզին բնորոշ հիմնախնդիրներից շատերը ժառանգություն են մնացել խորհրդային ժամանակաշրջանից, այն է՝ կառավարությունն այդ ժամանակ հաստատել է ոչ միայն արդյունաբերական սարքավորումների, այլ նաև ապրանքների հատուկ բաշխում, սոցիալ-մշակութային և կրթական միջոցառումների անցկացում բնակչության համար: Այս ամենի արդյունքը եղել է բարձր կենսամարդակը, և քանի սերունդ շարունակ հող մշակելու կամ հավելյալ եկամուտ ստանալու կարիք չի զգացվել: Ահա թե ինչու բնակչությունը պատրաստ չի եղել շուկայական տնտեսության մարտահրավերներին և զուրկ է եղել ձեռնարկատիրական հմտություններից:¹⁷

ԵԱՀԿ-ի կատարած ուսումնասիրություններից մեկը հանգամանորեն ներկայացնում է փոքր և միջին ձեռնարկությունների համար մարզում առկա խոչընդոտները, սահմանափակումներն ու արգելքները, երբ մարզը գրեթե ամբողջությամբ հանքագործությունից է կախված: Բայց քանի որ զեկույցը գեոդերային հարցերի կամ կանանց դրության մասին տեղեկություն չի պարունակում, հեշտ չէ նրանց կարգավիճակի մասին եզրահանգումներ կատարել: Այդուհանդերձ, նկատի առնելով ԵԱՀԿ-ի ուսումնասիրությունից քաղված տեղեկություններն ու մարզի մեր ֆոկլոր խմբերից ստացված արդյունքները, կանանց և տղամարդկանց միջև ակնհայտ է առնվազն մեկ կարևոր տարբերություն, այն է՝ աշխատանք գտնելու դժվարությունը: Ուսումնասիրությունը նշում է նաև որոշ խոչընդոտներ, որոնք բիզնեսում ներգրավված կանանց պարագայում առկա են որպես վարչական խոչընդոտներ, ֆինանսական սահմանափակումներ և ձեռնարկատիրական հմտությունների պակաս:

Սյունիքի կանայք

Մարզի կանանց առնչվող ավելի բնորոշ և որակական տվյալներ ձեռք բերելու նպատակով՝ Կապանում, Ագարակում, Մեղրիում, Գորիսում և Սիսիանում անցկացվել են 15 ֆոկլոր խմբեր, յուրաքանչյուրը՝ 8-15 կին մասնակիցներով, որոնք ներկայացնում են քաղաքականության մեջ որպես խորհուրդների անդամներ կամ գյուղապետեր հանդիսացող, գործարար և գործազուրկ կանանց: Ըստ ԵԱՀԿ աշխատակիցների, այդ կանանց գտնելը բավականին դժվար է եղել, ինչը հաղորդակցության և տվյալների բացակայության մեկ այլ վկայություն է:

Կապանը մարզկենտրոնն է՝ 46.800 բնակչությամբ, և մեծությամբ Հայաստանի չորրորդ արդյունաբերական կենտրոնը: Ավելի վաղ շրջանում քաղաքում զարգացած է եղել մշակութային ակտիվ կյանքը և զբոսաշրջության ոլորտը: Իրավիճակի վատթարացման հետևանքով այսօր չկան շատ զբոսաշրջիկներ, լավ հյուրանոցներ ու ռեստորաններ: Բայց հնարավորություններ դեռ կան:

Գորիսը մեկ այլ արդյունաբերական քաղաք է՝ 23.000 բնակչությամբ (և ընդարձակ գյուղական համայնքով՝ 21.000 բնակչությամբ): Արդյունաբերության հիմնական մասն են կազմում ադամանդագործությունը, էլեկտրոնիկան և սննդի մշակումը:

¹⁷ Սյունիքի մարզի հեռանկարը: Սոցիալ-տնտեսական զարգացումը, ԵԱՀԿ, Երևան 2004:

Սիսիանը՝ 17.000 բնակչությամբ, նույն չափի գյուղական տարածք ունի: Արդյունաբերությունը կազմում են միջին ձեռնարկություններն ու խոշոր տեքստիլ գործարանը, որի սեփականատերն ամերիկյան Գառնի կորպորացիան է:

Մեղրին՝ 9.600 բնակչությամբ, որը սահմանակից է Իրանին, հայտնի է իր թզուկ և այլ մրգերով: Պահածոների գործարանը ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտի (USDA) ֆինանսական օժանդակության շնորհիվ հաջողություն է ունեցել արտադրանքն արտահանել տարբեր երկրներ:

Ավելի վաղ շրջանում նշված քաղաքներն արդյունաբերական լայն գործունեություն էին իրականացնում, որոնցում ներգրավված էին կանայք: Այսօր դրանց մեծ մասը դադարել է գործել:

Ֆոկուս խմբերի տեսակետների մեջ էական տարբերություն չի արձանագրվել: Տարբեր քաղաքների կանայք նույն հիմնախդիրները քննարկելիս նույն փորձառությունների մասին են խոսել: Հաճախ նրանք ապագայի և իրենց հնարավորությունների մասին խիստ հոռետեսական գաղափարներ են արտահայտել՝ հաշվի առնելով իշխանությունների հետ կապված խնդիրները և ընտանեկան ծանրաբեռնվածությունը: Մյուս կողմից, ՀԿ-ների կին ներկայացուցիչների (ոմանք՝ մեծ պոտենցիալով) հետ հարցազրույցների ընթացքում առավել լավատեսական ու առաջադեմ գաղափարներ են արտահայտել:

Բոլոր խմբերում կանանց հիմնական դժգոհությունը, որն ամենից հաճախ էր հանդիպել, տեղեկատվություն ստանալու պակասն ու դժվարությունն է եղել: Բիզնեսում ներգրավված կանայք պնդում էին, որ իրենք իրազեկ չեն իրենց իրավունքների կամ տարատեսակ հնարավորությունների, օրինակ՝ վերապատրաստումների և վարկային հնարավորությունների մասին, նույնիսկ չգիտեն, թե որտեղից կարելի է տեղեկատվություններ ստանալ փոքր և միջին ձեռնարկությունների մասին: Փոխարենը նրանք առաջնորդվել են սխալ ինֆորմացիայով և ապակողմնորոշիչ խորհուրդներով: Հարկային օրենքների և մարմինների, փոխառությունների և վարկերի հասանելիության մասին ընդլայնված գիտելիքը հաճախ է առաջ քաշվել որպես նրանց բիզնեսի առանցքային, բայց գոյություն չունեցող գործոն: Այսօր նրանց աղբյուրները բարեկամներն են, երբեմն՝ հեռուստատեսությունը, որն ակնհայտորեն համապատասխան և օգտակար տվյալներ չի հաղորդում:

Գործազուրկ կանայք լուրջ դժգոհություն են արտահայտել աշխատանքի տեղավորման պետական գործակալության կապակցությամբ, քանի որ ընդհուպ 7 ամիս սպասել են, մինչև վերապատրաստման տեղերի մասին հայտարարումը, մի փաստ, որը կանանց հավաստմամբ, ավարտվել է նրանով, որ գործատուն ուրիշին է ընդունել աշխատանքի՝ առանց նույնիսկ գործակալությանը դիմելու: «Զբաղվածություն պետական ծառայություն» գործակալության երևանյան գրասենյակի հետ այդ դժգոհությունները քննարկելիս նրանք հերքել են, որ իրադրությունն այդպիսին է եղել, և որ վերապատրաստումները շատ ավելի վաղ են սկսվել: Որոշ կանայք մասնակցել են գործակալության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, որոնց արդյունքում, սակայն, աշխատանք չի ապահովվել: Ուստի շատ կանայք համարում են, որ գործակալությունն իրենց աջակցելու անհրաժեշտ ռեսուրսներ չունի և ավելի շատ ապավինում են անձնական կապերին (որոնք ոչ բոլորն ունեն): Գործակալությունը տարատեսակ

ծրագրեր է իրականացնում գործազուրկ կանանց օգնելու նպատակով, սակայն աշխատատեղեր ստեղծելու գործողությունների փոխարեն հիմնական շեշտը **ֆինանսական աջակցության վրա է դրված: Թե՛ այս իրավիճակը և թե՛ վերապատրաստումները փոփոխության կարիք ունեն:** Ձրույցների ընթացքում որոշ կանայք նաև սեփական բիզնես հիմնելու հավակնություն են դրսևորել՝ միաժամանակ գիտակցելով դրա դժվարությունը, քանի որ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չունեն:

Թե՛ բիզնեսով զբաղվող կանայք և թե՛ գործազուրկ կանայք քննադատել են իրենց հետ անցկացված վերապատրաստումները՝ դրանք համարելով մակերեսային, տեսական և իրենց համար ոչ օգտավետ: Մյուս կողմից, նրանք նոր, բայց իրենց պահանջները բավարարող վերապատրաստումների ու դասընթացների ընդհանուր պահանջ են ներկայացրել: Որոշ ՀԿ-ներ զեկուցել են, որ սեմինարներ են կազմակերպել բիզնեսով զբաղվող կանանց համար, սակայն չեն կարողացել որևէ տեղեկություն տրամադրել կանանց հետագա գործունեության մասին: Առանձին սեմինարները հազվադեպ են կայուն արդյունք ունենում, ընդհակառակը, դրանք կարող են հուսահատության առիթ լինել, քանի որ սեմինարների ժամանակ առաջադրվող գաղափարներն ու առաջարկությունները կյանքի կոչելն անհնարին է: Ինչպես արդեն նշվել է, Սյունիքում բացակայում են ձեռնարկատիրական հմտությունները, որը մարզի պատմությամբ է պայմանավորված: Դա պետք է կարգավորել ինտենսիվ և խորացված վերապատրաստումների միջոցով՝ թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց համար:

Որևէ կին երբևէ ուրիշ կնոջ չի կարևորել հասարակական կյանքում իր խաղացած դերի համար:

Քաղաքականությամբ զբաղվող կանանց դրության ուսումնասիրությունը տեղական մակարդակում վերհանեց նույն անորոշությունն ու երկընտրանքը, ինչը որ ազգային մակարդակում է: Խորհուրդների մեջ ընգրկված կանայք նաև քաղաքական պաշտոն ստանձնելու երկընտրանք են արտահայտել: Մի կողմից, նրանք քաղաքականությունն ընդունում են որպես տղամարդկանց ասպարեզ, որտեղ տիրում են խարդախությունն ու կոռուպցիան, մյուս կողմից, իրենց են տեսնում հասարակությունը փրկողների դերում: Քաղաքականության մեջ հայտնվելուն պես, խորհուրդների մեջ ընդգրկված կանայք հստակ տարբերակում են տղամարդկանց և կանանց դերերը: Ըստ կանանց՝ կնոջ պարտականություն է մեղմել տղամարդու ագրեսիվությունը և խթանել հասարակ մարդկանց կյանքի բարելավմանը միտված հիմնախնդիրները (բուժիաստատություններ, դպրոցներ), իսկ տղամարդիկ պետք է հոգան իրենց բիզնեսի ու քաղաքական դիրքի մասին: Կանանց համոզմամբ, եթե ընտրված կանայք ավելի մեծ թիվ կազմեին, դա կարող էր բարելավել կառավարությունն ու քաղաքացիների կենսամակարդակը:¹⁸ Տեղական մակարդակում նաև լիովին բացակայում է կանանց համագործակցությունը: **Քաղաքներում չկան գործող կանանց խմբեր, կանանց միություններ կամ խորհուրդներ:**

Մյուս կողմից, կին գյուղապետերը բավական ազդեցիկ են եղել՝ լինելով նպատակասլաց, հաստատական ու վճռական: Նրանք հպարտացել են իրենց դիրքով: Նույն զգացումն են ունեցել նաև նրանց համար հաշվապահի կամ

¹⁸ Գյուղական խորհուրդները հաճախ թույլ են դրսևորվել և ինքնավար չեն եղել: Ընտրություններն առավելապես ձևական բնույթ են կրել՝ կանանց ընտրվելու դեպքում խնդիրներ առաջացնելով:

վարորդի ծառայություններ մատուցած ամուսինները: Այս կին գյուղապետերը ապագա կին քաղաքական գործիչների դերի օրինակ կարող են ծառայել:

Բիզնեսով զբաղվող կանանց համար հասարակության արժեքները փոխվել են իրենց օգտին, քանի որ իրենց բիզնեսը բարելավում է ընտանիքի եկամուտը, որի միակ կերակրողը իրենք են հանդիսանում: Որպես բիզնեսով զբաղվելու հիմնական դրդապատճառ՝ հաճախ առաջ է քաշվել ընտանիքի կարիքը, այլ ոչ թե ձեռնարկատիրական մղումը կամ շահը: Նրանցից շատերը բիզնեսում ներգրավված են՝ ունենալով 2-3 աշխատող և գործում են ծառայությունների մատուցման ոլորտում: Վարկերի հասանելիությունը միշտ դժվար խնդիր է եղել, քանի որ կանայք տոկոսադրույքները շատ բարձր են համարել, գրավը (նրանք սեփականություն չունեին, որովհետև այն ամուսնու անունով էր գրանցված)՝ անիրատեսական: Ուստի հաճախ է խոսվել ցածր տոկոսադրույքով և առանց գրավի երկարաժամկետ վարկային ծրագրերի անհրաժեշտության մասին: Բիզնեսով զբաղվող կանանց միջև ցանց կամ համագործակցություն չկա, բացառությամբ Կապանի ֆերմերների ասոցիացիային պատկանող կանանց պարագայում:

Քաղաքականության և բիզնեսի նահապետական կառույցը, որտեղ տղամարդկանց ցանցը կանանց զրկել է համապատասխան տեղեկություններից և կապերից, շարունակական դժգոհությունների առիթ է եղել: Կանանց հավաստմամբ, տղամարդկանց ցանցը մաս միջոց է հանդիսացել՝ տղամարդկանց բիզնեսում իշխանությունների և նրանց միջամտությունից խուսափելու համար: Բիզնեսով զբաղվող կանայք ընդհանուր առմամբ համոզմունք են հայտնել, որ տղամարդիկ չեն հետևել օրենքին և իրենց համար անհասանելի որոշակի անօրինական առավելություններից են օգտվել:

Անկախ այս ամենից՝ տղամարդիկ կանանց որակների ու հմտությունների օրինակ են հադիսացել, և ընդհանուր առմամբ, կանայք կարծես տղամարդկանց կառույցի դարանում են հայտնվել՝ փոփոխության որևէ հնարավորություն չտեսնելով: Հետևաբար, կանայք իրենց կախյալ են համարում տղամարդկանցից՝ թե՛ քաղաքականության և թե՛ բիզնեսի մեջ, քանի որ տղամարդիկ ունեն կապեր, փող և իշխանություն, որոնցից կանայք զուրկ են: Ըստ կանանց՝ տղամարդկանց աջակցությունը բիզնեսում և քաղաքականության մեջ առաջընթացի նախադրյալ է: Հետևաբար, տղամարդկանց արժեքներն ընդունելն ու դրանց հարմարվելը, տղամարդկանց համաձայնությունը պարտադիր պայմաններ են այն կանանց համար, որոնք հաջողության են ձգտում բիզնեսում կամ քաղաքականության մեջ: Սիսայն անհամաչափությունն է այն հիմնական պատճառներից մեկը, որ կանայք չեն համագործակցում ուրիշ կանանց հետ, որ չունեն ինքնավստահություն ու հաստատականություն:

Ռեսուրս կենտրոններ. կանանց հզորացումը Սյունիքում

Հայաստանի կանանց համեմատությամբ՝ Սյունիքում կանանց ազդեցությունը տնտեսական ու քաղաքական կյանքի վրա ավելի ցածր է, քանի որ տեղի որոշում կայացնող մարմիններում նրանց ներկայացվածությունը ցածր է կամ ընդհանրապես բացակայում է: Հասարակության կենսական ոլորտները տնօրինվում են տղամարդկանց կողմից և կանանց փոխարեն նրանք են որոշումներ կայացնում:

Նույնիսկ եթե կանայք ընդգրկված չեն տղամարդկանց ոչ ֆորմալ ցանցերում (բիզնես և քաղաքականություն), ապա նրանք կախված են տղամարդկանց աջակցությունից և համաձայնությունից՝ կապված իրենց հետագա գործունեության հետ: Ընդհանուր իրավիճակը նրանց համար ճնշող է դառնում աշխատանքի կրկնակի կամ եռակի ծանրաբեռնվածությունից: Շատերն ընդունում են, որ տեղյակ չեն իրենց իրավունքների մասին և հիմնականում տեղեկություններն իրենց հասանելի չեն: Տնտեսական սուղ միջոցները սահմանափակում են նրանց գործողությունը բիզնեսում և քաղաքականության մեջ: Ոմանք երկար ժամանակ գործազուրկ են եղել և աշխատանք գտնելու հեռանկարներ չեն տեսնում: Կանանց գերակշիռ մասը ընտանիքից դուրս կապեր կամ ծանոթներ չունի և նրանք հազվադեպ են համագործակցում կամ չեն համագործակցում այլ կանանց հետ բիզնեսի կամ քաղաքականության հարցերում: Կանանց համար չկա հասարակական հանդիպումներ անցկացնելու հնարավորություն: Հետևաբար, միանգամայն բնական է, որ որոշ կանայք հոռետեսական վերաբերմունք են արտահայտել ապագայի մասին:

Կանանց հզորացնելու և հասարակության բոլոր մակարդակներում ընդգրկելու համար՝ առաջարկում են ստեղծել չորս ռեսուրս կենտրոններ Կապանում, Գորիսում, Սիսիանում և Մեղրիում:¹⁹ Այդ կենտրոնները պետք է նպատակաուղղված լինեն կանանց հզորացմանը երկու բնագավառներում՝ **տեղական իշխանություններում և բիզնեսում, և կանանց համար հանդիպման վայր հանդիսանան**՝ տեղական կարիքներին համահունչ միջոցառումներ իրականացնելու համար: Ռեսուրս կենտրոնները պետք է գործեն երեք մակարդակներով՝ գործ ունենալով կանանց հետ որպես ձեռնարկատերերի և քաղաքական գործիչների՝

- **Անհատական մակարդակ** . այն կանայք, որոնք ցանկանում են բիզնեսով կամ քաղաքական գործունեությամբ զբաղվել, ռեսուրս կենտրոնի միջոցով անհատական խորհրդատվություն են ստանում և իրենց կարիքներին համապատասխան վերապատրաստում անցնում:
- **Խմբային մակարդակ** . ռեսուրս կենտրոնը կարող է կազմակերպել լայնածավալ միջոցառումներ՝ ցանցային հանդիպումների համար, կազմակերպել սեմինարներ, խմբային վերապատրաստումներ, մշակել միասնական ծրագրեր:
- **Կառուցվածքային մակարդակ** . ռեսուրս կենտրոնը միջոցառումների և ծրագրերի հարցում կարող է համագործակցել Սյունիքի, ընդհանրապես Հայաստանի կամ օտարերկրացի կանանց հետ: Աշխարհի այլ հատվածներից կանանց հետ հանդիպումները մոր մոտեցման ու ցանցային հնարավորությունների առիթ կդառնան՝ ավելի լայն պատկերացում կազմելու համար:

Ռեսուրս կենտրոնները պետք է խորհրդատվական ծառայություն, բիզնեսի զարգացում, սեմինարներ, վերապատրաստումներ և ցանցային հնարավորություններ ապահովեն քաղաքականության մշակման ու համապատասխան ոլորտներում՝ քաղաքականությամբ և բիզնեսով զբաղվող

¹⁹ Ռեսուրս կենտրոնները հաջողություն են ունեցել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Շվեդիան, Ուկրաինան և Ռուսաստանը, բայց դրանք պետք է հարմարեցվեն կանանց և հասարակության տարբեր կարիքներին:

կանանց սատարելու համար: Քաղաքականություն մշակող մարմիններում ազդեցություն ապահովելը մեկ այլ կենսական խնդիր է:

Կարևոր է նկատել անհատ կնոջը, նրա ռեսուրսներն ու կարողությունները և հետագա զարգացման հնարավորություն ընձեռել:

Ինչպես արդեն նշել ենք այս զեկույցում, տեղեկատվության տարածումը Սյունիքի մարզում շատ թույլ մակարդակի վրա է, և իրականում պատկերացում չկա, թե ինչպիսի գործողություններ ու հնարավորություններ կան կանանց համար կամ ինչ կազմակերպություններն են գործում ոլորտում: Ռեսուրս կենտրոնների առաջին նախաձեռնությունը պետք է լինի այս թեմաներին առնչվող տեղեկատվության հավաքագրումն ու հասանելիության ապահովումը:

Սյունիքի մարզում որոշում կայացնող մարմիններում կանանց բացակայությունը զանգվածային բնույթ է կրում: Ուստի շատ կարևոր է քաղաքական պաշտոններ զբաղեցնող կանանց համագործակցությունն ու ցանցային գործունեությունը: Կին գյուղապետերի և խորհուրդներում ներգրավված կանանց հետ միասին կարելի է վերապատրաստումներ և ռազմավարական բնույթի նիստեր կազմակերպել՝ խորախուսելով ավելի մեծ թվով կանանց ակտիվություն ցուցաբերել քաղաքականության մեջ ու տեղական ինքնակառավարման մարմիններում և ընտրվել: Ֆոկուս խմբերի ընթացքում կանանց տրված հարցերի մյուս խումբը վերաբերել է ժողովրդավարության կառուցման մասին հիմնարար տեղեկատվությանն ու կանանց իրավունքներին:

Կենտրոններում կարող են կազմակերպվել նաև հանդիպումներ հարկային ոլորտի ծառայողների և աշխատանքի տեղավորման պետական գործակալության անձնակազմի հետ: Քանի որ չորս քաղաքներում էլ կան գործակալություններ, նախընտրելի է, որ գործակալության մեկ աշխատակից շաբաթական մեկ օր աշխատի ռեսուրս կենտրոնում, որպեսզի անհրաժեշտ խորհրդատվություն ապահովի, և շուկայական ու կանանց պահանջներին ավելի արագ արձագանքելու հնարավորություն լինի:

Վարկերին և միկրովարկերին վերաբերող օրենքների ու սահմանված կարգի իմացությունը նույնպես բարձր չէ, և կենտրոններում պետք է լինեն պատասխանատու գործակալությունների աշխատակիցներ՝ կանանց համապատասխան տեղեկատվություն տրամադրելու համար: Սեմինարների փոխարեն կենտրոնը պետք է գործնական վերապատրաստում կազմակերպի կանանց համար՝ ապահովելով շարունակական մոնիթորինգ:

Վերապատրաստումները, ցանցային հնարավորություններն ու խմբերի ստեղծումը կանանց համար իրենց բիզնեսը զարգացնելու և համագործակցություն սկսելու միջոցներ կարող են ապահովել: Բայց ինչպես նշված է զեկույցում, կանայք չեն վստահում իշխանություններին և կանանց հետ միասին աշխատելու փորձառություն չունեն: Ուստի հարկավոր է ժամանակ տալ, որպեսզի ստեղծվի վստահելի միջավայր, ցանցեր և համագործակցություն: Միայն սրանից հետո մարզերում և մարզերից դուրս ցանցային գործունեությունը բնականոն հուն կստանա: Կայուն արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ռեսուրս կենտրոններ հիմնելու միջոցով այս հիմնախնդիրներին լուծում առաջարկող ծրագրերը երկարաձգվեն (ասենք՝ երեք տարվա ժամկետով), որոնց իրականացումը պետք է կանոնավոր կերպով վերահսկվի: